Վերինար ոլորտ 3-ի համար

Բովանդակություն

- Երեխայի-գենդերային զգայուն բյուջետավորման մեխանիզմների ցածր մակարդակ ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև ՔՀԿ-ների ու ՔՀԿ-ների կոալիցիաների շրջանում: Այս մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն, ինչպես նաև ՔՀԿ-ների/ՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածություն մշտադիտարկման և ջատագովման գործողություններում:

- ՔՀԿ-ների/ՀԿ-ների՝ ՀՀ պարզեցված բյուջեի շուրջ քննարկումներում մասնակցության ցածր մակարդակ և դրա հանրային գործընթացը: Այս մեխանիզմների բարելավման անհրաժեշտություն, ինչպես նաև մշտադիտարկման և ջատագովման գործողություններում ՔՀԿ-ների ավելի մեծ մասնակցություն:

Զեկույց՝
«Ագոռա Սենթրլ Յուրոփ» չեխական ՀԿ
Օլգա Սեդլաչկովա

Պրահա, 2018 թ. մայիս

Մաս 1 – Ընդհանուր տեղեկություններ

Գենդերային հավասարության ոլորտում Եվրահանձնաժողովի ռազմավարության մասին ընդհանուր տեղեկություններ

Գենդերային հավասարության ոլորտում Եվրահանձնաժողովի ռազմավարությունը թիրախավորում է հետևյալ ոլորտները.

- Կանանց և տղամարդկանց համար հավասար տնտեսական անկախության խթանում
- Սեռով պայմանավորված աշխատավարձերի տարբերության վերացում
- Որոշումների կայացման մեջ գենդերային բալանսի առաջխաղացում
- Գենդերային բռնության վերացում
- ԵՄ-ից դուրս գենդերային հավասարության խթանում

ԵՄ մակարդակում կան կազմակերպություններ, որոնք հենց այս հարցով են զբաղվում, օրինակ՝
- Գենդերային հավասարության ազգային մարմիններ
- Գենդերային քաղաքականությունների ինտեգրման բարձր մակարդակի խումբ
- Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ
- Գենդերային հավասարության և հակախտրականության ոլորտներում իրավաբան-փորձագետների ցանց
- Գենդերային հավասարության փորձագետների եվրոպական ցանց
- Գենդերային հավասարության երկկողմանի ուսուցման ծրագիր

Ինչպես պարզ է դառնում վերը ներկայացված տեղեկատվությունից, Գենդերային հավասարության շուրջ ԵՄ ռազմավարությունն ավելի լայն ոլորտ է, քան ուղղակի երեխայի-գենդերային զգայուն բյուջետավորումը, և այն մեծ թեմա է ԵՄ-ում:

Հարց համար 1. Դուք ներկայումս ունե՞ք ինչ-որ հաստատություններ/քաղաքականությունների մշակման մարմիններ, որոնք գործ ունեն ՀՀ-ում գենդերային հավասարության հարցերի հետ:

Ի՞նչ է գենդերային քաղաքականությունների ինտեգրումը (Gender Mainstreaming)

Այստեղ մենք պետք է օգտագործենք տեղեկատվություն՝ տրամադրված Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի կողմից (EIGE) դրա կայքէջերում տեղակայված տեղեկատվության հիման վրա՝ http://eige.europa.eu/about-eige

Գենդերային քաղաքականությունների ինտեգրումը

գենդերային հավասարության իրականացման ռազմավարություն է: Այն ներառում է գենդերային տեսլականի ինտեգրումը քաղաքականությունների, կարգավորիչ միջոցառումների և ծախսման ծրագրերի պատրաստման, մշակման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեջ՝ կանանց և տղամարդկանց միջև հավասարության խթանման և խտրականության դեմ պայքարի համար:

Ինչու՞ է սա կարևոր: … ապահովում է, որ քաղաքականությունների մշակումը և օրենսդրական աշխատանքը հասարակության համար ավելի մեծ նշանակություն ունենա, քանի որ դա այնպես է անում, որ քաղաքականություններն ավելի արդյունավետ կերպով համապատասխանեն բոլոր քաղաքացիների կարիքներին: Գենդերային քաղաքականությունների ինտեգրումը հանրային միջամտություններն ավելի արդյունավետ է դարձնում և ապահովում է, որ անհավասարությունները չկրկնվեն:

Ո՞վ է պատասխանատու

Եվրոպական մակարդակում ԵՄ հաստատություններն են պատասխանատու գենդերային քաղաքականությունների ինտեգրման իրականացման համար: Ազգային մակարդակներում պատասխանատու են ազգային կառավարությունները: Հաջողակ խթանման համար կարևոր է, որ պետական մարմինների ամբողջ աշխատակազմը ներգրավվի գենդերային քաղաքականությունների ինտեգրման խթանման մեջ համապատասխան մարմինների ղեկավարության առաջնորդության ներքո:

Ինչպե՞ս է այն աշխատում
Քաղաքական կամքը շատ կարևոր է գենդերային հավասարության հարցում: Իրականացումը պահանջում է հստակ գործողությունների ծրագիր:

Ինչպե՞ս է այն օգտակար հասարակության/պետական բյուջեների համար:
Գենդերային քաղաքականությունների ինտեգրումը պահանջում է աշխատանք ֆինանսական և ժողովրդագրական տվյալների հետ: Այս աշխատանքի ընթացքում շատ անհավասարակշիռ և անարդյունավետ կողմեր կարող են հայտնաբերվել և բարելավել պետական ծախսերում:

Հարց համար 2.
Խնդրում ենք Ձեր սեփական բառերով բացատրել, թե ինչ է գենդերային քաղաքականությունների ինտեգրումը:

Հարց համար 3.
Դուք գիտե՞ք ՀՀ-ում գոյություն ունեցող որևէ գենդերային քաղաքականությունների ինտեգրման գործողությունների մասին:

Հարց համար 4.
Դուք գիտե՞ք/մասնակցություն ունե՞ք որևէ կազմակերպություններ(ում), որոնք աշխատում են գենդերային քաղաքականությունների ինտեգրման ոլորտում, ինչպես պետական կառավարման, այնպես էլ ՔՀԿ-ՀԿ-ներ:

Ի՞նչ է գենդերային բյուջետավորումը

Գենդերային բյուջետավորումը

մեխանիզմ է, որը թույլ է տալիս տեղափոխել գենդերային ինտեգրման քաղաքականությունները հստակ քաղաքականությունների/գործողությունների՝ տրամադրելով ֆինանսական ռեսուրսներ այն գործողություններին, որոնք քաղաքացիների/ բնակիչների բոլոր խմբերի բարօրությանն ու կարիքներին են նպաստում:

Այս մեխանիզմն իրականացնելու համար պահանջվում է որոշակի նախապատրաստական աշխատանք.

- ունենալու համար հասանելի վիճակագրական տվյալներ բնակչության համապատասխան հատվածի համար՝ ազգային, մարզային, տեղական բնակիչների համար. տղամարդկանց և կանանց/18 տարեկանից ցածր երեխաների հատվածը… և նմանատիպ բաներ՝ կախված քո նպատակից, թե որտեղ ցանկություն կա միջամտելու բյուջեի հարցում

Այս մեխանիզմն իրականացնելու համար, պահանջվում է ունենալ ավելի մանրակրկիտ և հասանելի բյուջեներ.

Բյուջեները սովորաբար հանրայնացվում են պարզեցված տարբերակներով, սովորաբար ըստ բյուջեների գլուխների, ինչպես, օրինակ.

• Եկամուտներ և ծախսեր

- Գործառնական և ներդրումային բյուջեներ
- Գլուխներով - Ենթակառուցվածք/Տրանսպորտ/Կրթություն/Սոցիալական հարցեր…

Բայց գենդերային բյուջետավորման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ավելի մանրակրկիտ ինֆորմացիա անհատական ծախսերի վերաբերյալ՝ ի վիճակի լինելու հասկանալ, թե ով/բնակչության որ խումբն է ամենաշատն օգուտ քաղում այսպիսի ծախսից:

Հարց համար 5.

Դուք ձեռքի տակ ունե՞ք մանրակրկիտ վիճակագրական տվյալներ, որոնք բնութագրում են ձեր համապատասխան բնակչությունը /ազգային, մարզային, տեղական/:

Հարց համար 6.

Ձեզ հասանելի՞ են մանրամասն բյուջեները /ազգային, մարզային, տեղական/:

Մաս 1-ի ամփոփում

Մաս 1-ում դուք սովորեցիք

- Եվրահանձնաժողովի ռազմավարությունը գենդերային հավասարության ոլորտում
- Ի՞նչ է գենդերային քաղաքականությունների ինտեգրումը /Gender Mainstreaming/ և ինչու՞ է այն կարևոր գենդերային հավասարության խթանման հարցում
- Ի՞նչ է գենդերային բյուջետավորումը և ինչպիսի՞ նախապատրաստական աշխատանք պետք է տարվի գենդերային բյուջետավորում սկսելու համար

Մաս 1-ում դուք պատասխանեցիք հետևյալ հարցերին.

- Հարց համար 1. Դուք ներկայումս ունե՞ք ինչ-որ հաստատություններ/քաղաքականությունների մշակման մարմիններ, որոնք գործ ունեն ՀՀ-ում գենդերային հավասարության հարցերի հետ:
- Հարց համար 2. Խնդրում ենք Ձեր սեփական բառերով բացատրել, թե ինչ է գենդերային քաղաքականությունների ինտեգրումը:
- Հարց համար 3. Դուք գիտե՞ք ՀՀ-ում գոյություն ունեցող որևէ գենդերային քաղաքականությունների ինտեգրման գործողությունների մասին:
- Հարց համար 4. Դուք գիտե՞ք/մասնակցություն ունե՞ք որևէ կազմակերպություններ(ում), որոնք աշխատում են գենդերային քաղաքականությունների ինտեգրման ոլորտում, ինչպես պետական կառավարման, այնպես էլ ՔՀԿ-ՀԿ-ներ:
- Հարց համար 5. Դուք ձեռքի տակ ունե՞ք մանրակրկիտ վիճակագրական տվյալներ, որոնք բնութագրում են ձեր համապատասխան բնակչությունը /ազգային, մարզային, տեղական/:
- Հարց համար 6. Ձեզ հասանելի՞ են մանրամասն բյուջեները /ազգային, մարզային, տեղական/: